ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2022թ. **N ------- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՓՈՂ. 62 ՇԵՆՔԻ Հ. 141 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» N498-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Մամիկոնյանց փող. 62 շենքի հ. 141 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման № 25102013-01-0233 վկայական) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն բնակարանի բնակիչներ՝ Գրետա Գուրգենի Խաչատրյանին, Գայանե Էդգարի Էլոյանին, Արսեն Էդգարի Էլոյանին (3 անձ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՓՈՂ. 62 ՇԵՆՔԻ № 141 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.25102013-01-0233 վկայական) Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց փող. 62 շենքի հ. 141՝ 36 քմ ընդհանուր մակերեսով, բնակարանը սեփականության իրավունքով օտարել /նվիրել/ նույն բնակարանի բնակիչներ՝ **Գրետա Գուրգենի Խաչատրյանին, Գայանե Էդգարի Էլոյանին, Արսեն Էդգարի Էլոյանին** (3 անձ), որպես ընտանիքի անդամների համատեղ սեփականություն:

Մամիկոնյանց փող. 62 շենքի հ.141 բնակարանը 2011թ. առայսօր առանց իրավահաստատող փաստաթղթերի զբաղեցնում է դիմումատուի ընտանիքը /չորս անձով/, որոնք փաստացի տիրապետում և երեք անձով (ինքը և երկու զավակները) հաշվառված են տվյալ բնակարանում (հիմք՝ շենքը սպասարկող լիազոր կառավարչի 18.04.2022թ. տեղեկանքը և բնակիչների հայտարարությունը, ՀՀ ոստիկանության ԱՎՎ Արաբկիրի անձնագրային բաժանմունքի կողմից տրված 26.05.2022թ. հ.220042004121, 19.05.2022թ. հ.220049004205, 28.02.2022թ. հ.220049004095, հ.220049004094 տեղեկանքները): Առկա են նախկին հանրակացարանային «ԵրՄՄԳ» ՓԲԸ-ին պատկանող Մամիկոնյանց փող. 62 շենքի թիվ 141 (908) բնակարանի համար «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված վճարումների վերաբերյալ տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տեղեկանքները, ինչպես նաև Մամիկոնյանց փող. 62 շենքի թիվ 908 բնակարանին նոր՝ Մամիկոնյանց փող. 62 շենքի թիվ 141, հասցե տրամադրելու մասին որոշումը:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմումատուի ընտանիքը ավելի քան 11 տարի առանց իրավահաստատող փաստաթղթերի փաստացի տիրապետում է տվյալ բնակարանը, որտեղ հաշվառված են 2014թ-ից ու տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու ավագանու համապատասխան որոշում՝ համաձայն սույն ծրագրի 3-րդ կետի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՓՈՂ. 62 ՇԵՆՔԻ Հ. 141 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Մամիկոնյանց փող. 62 շենքի հ. 141 բնակարանը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՓՈՂ. 62 ՇԵՆՔԻ Հ. 141 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Մամիկոնյանց փող. 62 շենքի հ. 141 բնակարանը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**